

3905

Emah  
1900

538

9-55

ԽԱԳԻՑԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

(100)

№ 5

ՄԱԳԻՍՏՐԱՆՏՈՒԹԻՒՆ

530

6-96

2010

6045

6045

ԲՆԱԳԻՑԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴՐԱԴԱՐԱՆ

530  
86-2h

*այ*  
№ 5

538  
9-55

# ՄԱԴՐԻՍՎԱՆՈՒԹԻՒՆ

Կազմեցին

ՀՅ

Ա. ԶԻԼԻՆԿԵՐԵԱՆ և Տ. ԹԱՅՐԱՋԵԱՆ



Ճ Ո Ւ Ճ Ի

Տպարան Ա. Մ. Մահմետի-Յակոբեանի

Տիպ-Լիտոգրաֆիա Ա. Մ. Մուղսակով, վ. Շուշե.

1900

805

15417

Дозволено Цензур. Тифлисъ 14 июня 1899 г.

2002

1. Առաջնիւ էւ հայութեան ոյժ:

Սիլելի ընթելցող!

Մենք արգէն մեր չորրորդ «ՈՅՖԵՐ» գրքոյկի  
մէջ ձգողական ոլժի մասին հասկացողութիւն տա-  
լու համար, ամենից առաջ որպէս օրինակ բերինք,  
կայծաքարի պողպատը (միլագուզը), որին մազնի-  
սական ոլժ էր տուած: Մենք նպատակով այդ օրի-  
նակը բերինք, որովհետև բնութեան մէջ ձգողակա-  
նութեան երեսոյթները կամ կատարած գործերն ոչ  
մի բանով չի կարելի այնպէս պարզ ցոյց տալ, ինչ-  
պէս մազնիսով: Մարդ որչափ էլ անտեղեակ լինի  
բնական ոլժերին, որչափ էլ նրանց մի տեսակ հե-  
քիալի, աչքակապութիւն համարէ, այնուամենայնիւ  
մազնիսով կատարած գործերը տեսնելիս շատ բան  
կըսովորի, կը համոզուի և կամալ ակամայ կ'սկսէ նոյն-

պէս լուրջ կերպով մտածել ուշադրութեան արժանի այդ երեսովների ու փաստերի վրայ։ Եթէ այդպէս է, ուրեմն եկ ընթերցող միասին մի շարք փորձերով սովորենք, թէ ինչ բան է մագնիսական ոյժը և ինչ լատկութիւններ ունի։ Սրանով չկարծես թէ մի դժուար խելքի զոռ տալու բան կայ, ընդհակառակը գործը չափազանց հեշտ և պարզ է։ այնպէս որ, ամեն մարդ էլ կարող է և անպատճառ ինքն իր ձեռքով պիտի կատարէ այդ շատ հասարակ ու վերին աստիճանի հետաքրքիր փորձերը։

Գուցէ ամենից առաջ հարց տաս, թէ արդեօք ինչ բան է այդ մագնիս ասած բանը.

— Մագնիսը հէնց երկաթի մի տեսակ հանք է, որն երկրի միջից է գուրս գալիս։ Սա մի այն-պիսի ոյժ, զօրութիւն ունի, որ դէպի իրան է քաշում, կպցնում պողպատի, երկաթի կտորներ ու խարտոցուածք. ահա սա է իսկական ու բնական մագնիսը։ Միայն աչքի առաջ պիտի ունենալ, որ ամեն մի երկաթի հանք մագնիս չէ, այլ ինչպէս ասացինք, նա երկաթի հանքի մէկ ուրիշ տեսակն է։

Եթէ վեր առնենք մի կտոր պողպատ (չալիկ) և կամ մէկ մեծ ասեղ ու փոքր ինչ պահենք մագնիսի վրայ կամ մի քիչ տրորենք, այն ժամանակ մեր պողպատը, մեր ասեղն էլ կստանայ մագնիսական ոյժ. սա նշանակում է, թէ նա էլ դառնում է մի տեսակ մագնիս, որ կարող է իրան քա-

շել-կպցնել երկաթի կտորներ ու ասեղ։ Բայց ո՞ր-տեղից ձեռք բերենք այդ մագնիսը, գուցէ մէկը հարցնէ. բոլորովին կարիք էլ չկայ իսկական մագնիս գտնելու և գուցէ շատ տեղերում դժուար է ճարւում։ Դրա փոխանակ կարողենք վեր առնել կայծաքարի պողպատն, որն արդէն մագնիսացրած է։ Սա իր ձգողական լատկութեամբ ոչ մի բանով չէ զանազանուում իսկական մագնիսից և այնքան սովորական բան է, որ ամեն մի մարդ կարող է շատ էժան կերպով ձեռք բերել<sup>\*)</sup>։ Եթէ կայծաքարի պողպատով էլ տրորենք մէկ ասեղ կամ մի կտոր պողպատ, կը տեսնենք, որ նրանք դարձեալ մագնիսանում կամ մագնիսական ոյժ են ստանում։ Սա նշանակում է, թէ մեր առաջուայ հասարակ ասեղն այժմ կարող է դէպի իրան քաշել, կպցնել ուրիշ ասեղներ, երկաթի մանրիկ կտորներ ու խարտոցուածք։ Ահա ընդհանրապէս այս ձգողական ոյժին ասում ենք „մագնիսական ոյժ“ կամ „մագնիսականութիւն“։ Մենք յետոյ կը սովորենք, որ ոչ միայն բնական մագնիսով, այլ էլէքտրականութիւնով կարելի է տւելի զօրեղ կերպով մագնիսացնել պողպատն ու երկաթը։

<sup>\*)</sup> Ծանութեալլեան. Այժմ պայտի ձևով շատ տեկի մեծկակ մագնիսացրած պողպատներ են պատրաստում յատկապէս երեխաների խալակիներինամար. եթէ դրանից գտնել՝ տեկի լաւ կընին, որպինետ շատ և շատ զօրեղ է, քան կայծաքարի պողպատը. տես պատկեր 1.

Այսպէս, մեր փորձերի համար ամեն մարդ սլէտք է ունենայ կամ կայծաքարի պողպատ և կամ տղաների խաղալիքների համար պատրաստած գրա մեծ պայտաձև տեսակը:

Եթէ կայծաքարի պողպատը մօտեցնենք ասեղին, կը տեսնենք, որ նա սկսում է ասեղն իր տեղից շարժել. և եթէ շատ հեռու չէ, վերջապէս քաշելով՝ իրան է կպցնում այնքան պինդ և այնքան ամուր, որ ասեղը նրա վրայից պոկելու համար բաւականին ոյժ ենք գործ գնելու: Միւնոյն կերպով մագնիսացրած ասեղն է իրան քաշում կպցնում երկաթի խարտոցուածք և ուրիշ ասեղներ:

Որովհետեւ մագնիսացած ասեղն էլ, ինչպէս տեսանք, կատարեալ մի տեսակ մագնիս է, գրա համար այսուհետեւ նրան ասելու ենք մագնիս. ուրեմն մագնիս ասելով մենք պիտի հասկանանք մագնիսացած պողպատէ թել և կամ ասեղ, իսկ ոռփորական կայծաքարի պողպատին կամ աւելի մեծ տեսակին ասելու ենք պայտաձեւ մագնիս:

Այժմ սկսենք մեր փորձերը: Եթէ մագնիսը (մագնիսացրած մեծ ասեղը) երկաթի խարտոցուածքի\*) մէջ գնենք, կը տեսնենք, որ այդ մանրիկ երկաթներն ամենից շատ հաւաքւում, կպցումեն նրա ծալրերին. որքան հեռանում են գէպի մագնիսի

\*) Յանօլուս-Եփան. երկաթի խարտոցուածք կարելի է առնել ամեն մի դարբինից:

մէջ տեղը, այնքան էլ քչանում են և վերջապէս ուղիղ կենդրոնում ոչինչ չի լինում. այն ինչ ծալրերին այնքան շատ են երկաթի խարտոցուածքներըն, որ միմեանց կպչելով կազմում են բարակ թերեր և մի տեսակ մորուքի ձեւ են ստանում: Տէս պ. ||

Միւնոյն փորձն եթէ պայտաձև մագնիսով անենք՝ կը տեսնենք, որ մեծ մասով դարձեալ ծալրերին հաւաքուելով՝ երկաթի խարտոցուածքները մորուքի պէս կախ են ընկնում. իսկ եթէ մագնիսը շուռ տանք ու կամարաձև մասը կամ կենդրոնը մտցնենք մանրիկ երկաթների մէջ, կը տեսնենք, որ նրան ոչինչ չի կպչում: Այսպէս, որչափ էլ փորձ անենք, միշտ կը տեսնենք, որ առհասարակ երկաթի խարտոցուածքը ծալրերին շատ է կպչում, իսկ որքան մէջ տեղն է գնում՝ այնքան նրանք պակասում և վերջապէս ուղիղ կենդրոնում կամ մէջ տեղում ոչինչ չէ լինում. ուրեմն շատ պարզ հասկանալի է, որ մագնիսի ծալրերում ծգողական ոյժը զօրեղ է, այն ինչ մէջ տեղը գնալով՝ թուլանում ու բոլորովին պակասում է:

Այդ ինչ բան է, գուցէ ասես դու, հետաքրքիր ընթերցող կամ գուցէ մէկ ուրիշն էլ խարտոցուածքը մագնիսի վրայից վար թափէ և նայէ, թէ արդեօք ո՞րտեղ է այդ ոյժը կամ ինչ բան կայ այնտեղ. բայց այս բոլորը զուր աշխատանք է. գրանով չես կարող իմանալ, թէ մագնիսն իսկապէս

այդ տեսակ ձգողական յատկութիւն ունի. միայն երբ նա երկաթին ենք մօտեցնում իսկոյն միանգամից յայտնում է մագնիսի ձգողական ոյժը և մեզ համոզում է, թէ բնութեան մէջ առարկաները կարող են այսպիսի յատկութւաններ ունենալ, որ կարելի է որոշ հանգամանքներում ճանաչել ու սովորել միմիայն եղելութիւններով կամ փաստերով:

Մագնիսացրած ասեղն իր տեսքով, գոյնով, քաշով և կամ ուրիշ յատկութիւններով երբէք չի կարելի զանազանել միևնույն մեծութիւն ունեցող հասարակ (մագնիսականութիւն չունեցող) ասեղից. բայց և այնպէս մագնիսացած ասեղը բոլորովին ուրիշ բան է. նրա զանազան մասերն ունին իրանց առանձին յատկութիւնը. երկու ծալրերը մագնիսացած են, իսկ մէջ տեղը ոչ:

Սա որքան էլ ուշադրութեան արժանի ու զարմանալի է, բայց դարձեալ դեռ ոչինչ է մագնիսական այն մեծ երեսյթների առաջ, որ մենք շուտով կը տեսնենք:

Եթէ մագնիսը մօտեցնենք ասեղի ծալրին, իսկոյն քաշում իրան է կպցնում և վերցնում է նրան. ալժմ այդ կախ ընկած ասեղը դիպցնենք մէկ ուրիշ ասեղի, և ի՞նչ—կը տեսնենք, որ սա էլ կպչում է կախ ընկածին. Եթէ զօրեղ է մեր մագնիսացած ասեղը և կամ պայտածե մագնիսը, այն ժամանակ երեք, չորս, դեռ աւելի ասեղներ կարող են ծալր ծալրի քաշ դալ ու կպչել մագնիսին:

## 2 Մի քանի փողծեր էլ.

Եթէ երկաթի խարտոցուածքը ցանենք թղթի վրայ և մագնիսը բռնենք նրա տակն, այն ժամանակ կը տեսնենք, որ մագնիսական ոյժը թղթի տակից էլ է ազդում. դրա համար խարտոցուածքը դարձեալ հաւաքում է տւելի շատ երկու ծալրերին. երկաթի մանրիկ կտորներն իրար կպչելով երկու կողմում կազմում են համարեա մի տեսակ փետուրներ: Եթէ մագնիսն արագ—արագ դէս ու դէն շուռ տանք՝ պարզ կը նշմարենք, որ միշտ խարտոցուածքներն ամեն կրղմից վազում են դէպի ծալրերը և երբեմն շատ հետաքրքիր ու տեսակ տեսակ ձեւեր են կազմում:

Իսկ մենք սրանց վրայ երկար կանգ չառնենք և կարիք էլ չկալ, քանի որ ամեն մարդ մի քանի փորձեր անելով կարող է այդ ձևերը տեսնել:

Բայց դու ընթերցող, չկարծես, թէ մագնիսը և կամ կալծաքարի պողպատը թղթի տակից ազդում է խարտոցուածքին ու այդ տեսակ պար է ածում միմիայն նրա համար, որ թուղթը բարակ է. ընդհակառակը շատ փորձերով կարող ենք հա-

մոգուել, որ զօրեղ մագնիսի ոյժն անցնում է նոյն-պէս աւելի հաստ մարմինների տակով և ներգործում է երկաթին:

Օրինակ, Եթէ փայտէ սեղանի վրայ դնենք մի քանի փոքրիկ ասեղներ և մեր ասած մեծ պայտաձև մագնիսը բռնենք նրա տակը, իսկոյն այդ հաստ փայտի արանքով էլ մագնիսական ոյժը սկսում է դէս ու դէն խաղացնել ասեղները: Միևնույն բանն է պատահում, Եթէ սեղանի փոխանակ վեր առնենք բարակ կամ հաստ ապակի, կազմով ու անկազմ բաւականին հաստ գրքեր. գուցէ այս փորձերը յաջողուին կալծաքարի պողպատով էլ. իսկ Եթէ մագնիսը շատ զօրեղ է, այն ժամանակ կարող է սեղանի տակից նրա վրայ դրած երկաթէ գնտակն անդամ դէս ու դէն շարժել: Մի քանի ձեռնածութիւններ (Փօկուսներ) կատարում են հէնց այս տեսակ մագնիսով, որի ձգողական ոյժն երբէք չի կարող խանդարուել, որքան էլ հաստիկ առարկաներով բաժանուած լինէր երկաթից: Եթէ մագնիսականութեան վրայ հասկացողութիւն չունենալինք ու տեսնէինք, թէ ինչպէս մի որ և է ձեռնածու (Փօկուսնիկ) սեղանի վրայ դրած երկաթէ գնտակը պար է ածում առանց ձեռք տալու, այն ժամանակ պիտի զարմանալինք. բայց այժմ այդպիսի բան տեսնէիս հրաշք չենք համարել, այլ շատ բնական ու սովորական բան, որը մենք էլ կարող ենք կատարել:

Այժմ մի ուրիշ փորձ. Եթէ մագնիսացը ասեղի<sup>\*)</sup> մէջ տեղից թել կապելով՝ կախ տանք, այն ժամանակ կը տեսնենք մի ուրիշ երկութ, մէկ ուրիշ նոր խաղ: Այդ թելը մէկ մեխի կամ ուրիշ բանի վրայ կապելով այնպէս կախենք, որ քաշընկած ասեղը չորս կողմից ազատ շարժուելու տեղ ունենայ: Մեր մագնիսը (մագնիսացը ասեղը) առաջ ու առաջ սկսում է դէս ու դէն օրօրուիլ և վերջապէս մի որոշ գիրքով, որոշ ուղղութիւնով կանգ է տռնում: Եթէ շարժենք նրան, դարձեալ այս ու այն կողմը գնալուց յետոյ էլի այն գիրքով է կանգ առնում, ինչպէս առաջ: Որքան անգամ էլ նրան օրօրենք, հէնց որ ազատ ենք թողնում՝ դադար առնելիս մեր մագնիսը նորից իր առաջուայ գիրքով է կանգնում:

Եթէ լաւ նայենք, կը տեսնենք, որ ասեղի մէկ ծալը գարձած է գէպի հիւսիս, իսկ միւս ծայրը գէպի հարաւ: Մեր մագնիսի այս գիրքն այնքան կանոնաւոր և այնքան մշտական է, որ ամպ ժամանակ ու մութ գիշերն անտառի մէջ, ծովի վրայ, ճանապարհին կամ մի որ և է անապատում կարող ենք հեշտ կերպով իմանալ, թէ ո՞ր կողմն է հիւսիս և ո՞րն հարաւ. երբ այս գիտենք, կարող ենք նոյնպէս իմանալ արեւելքն ու արեւմուտքը. այն ինչ

<sup>\*)</sup> Ծանչելութիւն. Արդէն գիտենք, որ առեղք կայծաքարի պողպատի վրայ մի քիչ կպած թողնելով կամ արսորելով, նա էլ ստանում է մագնիսական ոյժ:

առանց դրան այդ տեսակ հանգամանքներում անկարելի էր զիտենալ երկրի չորս կողմքը: Որովհետեւ մագնիսացած ասեղը ցոյց է տալիս երկրի կողմերը, դրա համար էլ ասուում է „կողմնացոյց“ (կօմպաս),<sup>\*</sup> որը ճանապարհորդութեան, մանաւանդ նաւագնացութեան համար շատ մեծ նշանակութիւն ունի:

Ի հարկէ այս նպատակի համար ասեղի մէկ ծալրին նշան են անում՝ որպէս զի իրար չխառնեն և զիտնան, թէ որն է հիւսիս ցոյց տալիս և որն հարաւ: Շատ հասարակ կերպով կարելի է ասեղի մէկ ծալրին քիչ մեղրամու կպցնել կամ թանաքով նշան անել. եթէ սա հիւսիսայինն է, այն ժամանակ միւս ծալրը կը լինի հարաւ ցոյց տուողը. որովհետեւ որքան էլ շարժենք, կանդ առնելիս դարձեալ հիւսիս ցոյց տուող ծալրը միշտ կը նայէ դէպի հիւսիս, իսկ միւսն էլ միշտ դէպի հարաւ: Մէկ ծալրին նշան անելուց յետոյ՝ շարժելու և հանգիստ տալու շատ փորձեր անելով կը համոզուենք, որ ուղիղ այդպէս է:

Ընդունենք, թէ մեղրամոմով նշան արածը մագնիսի հիւսիսային ծալրն է, իսկ միւսն էլ իհարկէ կը լինի հարաւալինը: Մագնիսի ծալրերին սովորաբար ասում են բեեռներ. դրա համար էլ դէպի հիւսիսնայողին ասում ենք „հիւսիսային ըեւեռ“,

\* Մասըլութէն. Կողմնացոյցի փոքրիկ տեսակն որպէս զարդարանք կամ երրեմն էլ ճիշտ իր նպատակին ծառայեցնելու համար քաշ են տալիս ժամացոյցի շղթայից:

իսկ հարաւ նայողին՝ „հարաւային ըեւեռ:“

Այսքանը զիտնալով՝ այժմ մենք պէտք է մանրամասն սովորենք բեեռների աչքի ընկնող լատկութիւնները:

խենք, ինչպէս առաջինն արինք, այն ժամանակ կը տեսնենք, որ սրա մէկ ծալրն էլ դառնում է դէպի հարաւ. կը նշանակէ՛ սա էլ ունի և՛ հիւսիսալին, և՛ հարաւալին բևեռ:

Բևեռները իրար չխառնելու համար մեր երկրորդ ասեղի հիւսիսալին ծալրին էլ կպցնենք միքիչ մեղրամոմ և հետևեալ փորձն անենք:—

Թելով կախ արած ասեղներից մէկը շարժենք և սպասենք, մինչև որ կանգ առնէ և հիւսիսալին բևեռը դարձեալ նայէ դէպի հիւսիս. հիմա եթէ այս բևեռին մօտեցնենք մի կտոր երկաթ, իսկոյն մեր ասեղն արագ զալիս կպչում է երկաթին. միւնոյն բանն է լինում, երբ երկաթը մօտեցնում ենք հարաւալին բևեռին: Այն ինչ բոլորովին նոր և ուրիշ բան է պատահում, երբ կախ արած ասեղներից մէկի հիւսիսալին բևեռը մօտեցնում ենք միւս ասեղի հիւսիսալին բևեռին. այդ դէպքում կը տեսնենք, թէ ինչպէս իր համար ազատ կախ ընկած ասեղն իսկոյն յետ է փախչում և երբեմն էլ սկսում է իր չորս կողմում պառյտներ անել. ուրեմն մէկ ասեղի հիւսիսային ըեւեռող փախչում է միւսի հիւսիսային ըեւեռոից կամ լաւ է ասել՝ հիւսիսային ըեւեռները յետ են քշում միւնիանց:

Եթէ սպասենք, մինչև որ ազատ կախ ընկած ասեղը հանգիստ կանգ առնէ և ձեռքերիս բռնած միւս ասեղի հարաւային ըեւեռող ալժմ մօտեցնենք

### Յ Մազնիսի երկու ըեւեռների յատկութիւնը:

Հիմա մի ուրիշ շատ հետաքրքիր փորձ անենք: Վեր առնենք մէկ ուրիշ, մագնիսական ոլժչունեցող ասեղ. նրա մէջ տեղից բռնենք, մեր մագնիսացած ասեղով կամ կայծաքարի պողպատով միւմիայն նրա մէկ ծալրը քիչ տրորենք, աւելի լաւ է միայն մի ուղղութիւնով շինք, այսինքն միշտ մէջ տեղից դէպի ծալրերը տանենք՝ այն ժամանակ մեր նոր ասեղն էլ կ'ստանալ մագնիսական ոլժիաց զարմանալին այն է, որ չէ թէ միայն տրորած ծալրն է մագնիսանում, այլ մագնիսանում է միւս չտրորած ծալրն էլ:

Գուցէ մտածես սիրելի ընթերցող, եթէ ալդպէս է ուրեմն մեր քսած առաջին մագնիսն իր մագնիսականութիւնը՝ տալով միւսին իր ոյժը կորցրեց. ոչ երբէք. շատ անդամ դեռ նրա ոլժը դեռ մի քիչ զօրեղանում, տւելանում է. ինչ էլ որ լինի, մեր առաջուտայ ասեղի մագնիսականութիւնը չէ թուլանում:

Այժմ մենք ունինք երկու մագնիսացած ասեղ: Եթէ երկրորդ ասեղն էլ թելով կապենք ու կա-

Նրա հիւսիսային ըեւեռին, այն ժամանակ նրանք միմեանց լետ չեն քշում, իրարից չեն փախչում, այլ ընդհակառակը մէկ ասեղի հարաւային ըեւեռը զօրեղ կերպով իրան է քաշում՝ կպցնում միւս ասեղի հիւսիսային ըեւեռը:

Այսպէս ուրեմն մէկ ասեղի հիւսիսային բևեռը կպչում է միւսի հարաւային բևեռին, իսկ ընդհակառակը նրանց հիւսիսային բևեռները միմեանց քշում հեռացնում են:

Եթէ ազատ կախ ընկած ասեղի հարաւային բևեռի հետ միևնոյն փորձն անենք, գարձեալ դուրս է գալիս նոյն բանը: Մեր ձեռքում բռնածի հիւսիսային բևեռը մօտեցնենք, իսկոյն իրար քաշելով կպչում են միմեանց, իսկ ընդհակառակը հարաւայինը միւսի հարաւային բևեռին մօտեցնելիս իրարուց փախչում են:

Չէ որ սա ամեն մարդու համար գնահատելի և ուշադրութեան արժանի բան է. ով երբէք տեսած չէ, արժէ այդ փորձն անել, անձամբ տեսնելու համզուել. այստեղ մեր աչքի առաջ բացւում են բնական նշանաւոր երեսոյթներ և տալիս են մեզ մտածելու շատ նիւթ:

Այսպէս մենք տեսնում ենք, որ ամեն մի մադուսի մէջ մագնիսական ոյժը կամ մագնիսականութիւնը բաժանուած է երկու մասի. մէկ մասը հաւաքուած է հիւսիսային բևեռում, իսկ միւս մասը՝

հարաւայինում. բայց սրանից երկու հիւսիսային և երկու հարաւային բևեռները մի տեսակ իրար թշնամի են, որովհետեւ միմեանցից փախչում են, միմեանց քշում հեռացնում են: Այս փորձերից կարելի է դուքս բերել և այն, որ երկու նման բևեռներն իրար ազդում են վանողական ոյժ, իսկ երկու ոչ նման բևեռները (հիւսիսային ու հարաւային) ձգողական ոյժ:

Նատ կարելի է ընթերցողը մտածէ, հապա Բնչպէս պէտք է բացատրել այս գաղտնիքը. յետոյ Ենք խօսելու այդ մասին, դեռ ամենից առաջ մի փորձ ՅՈՒՆԻ անենք:

Արդէն իմացանք որ մագնիսացած ասեղը մէկ ծալրում ունի հիւսիսային և միւսում՝ հարաւային բևեռ. արդեօք Բնչ կարող է պատահել, եթէ նրան մէջ տեղից երկու կտոր անենք: Միթէ պէտք է ստանանք երկու կտոր մագնիս, որոնցից մէկը լինելու է միայն զոտ հիւսիսային ըեւեռ, իսկ միւսն էլ՝ միմիայն զոտ հարաւային ըեւեռ:

Ով որ չգիտէ, լաւ է անձամբ կատարէ այդ փորձը և տեսնի, թէ Բնչ կարող է առաջ գալ երկու կտոր անելուց: Սա էլ հետաքրքիր է և հետեւանքը զարմանալի:



4 Ի՞նչ է պատահում երբ մագնիսը կիսում ենք:

Եթէ մագնիսացած ասեղը մէջտեղից կիսենք, երկու կտոր անենք, այն ժամանակ կ'ստանանք երկու առանձին մագնիս, որոնցից ամեն մէկը կ'ունենալ հիւսիսալին ու հարաւալին բևեռ և մի կենտրոն զուրկ մագնիսականութիւնից: Անշուշտ ընթերցողը պիտի հարցնէ, թէ ինչու այսպէս է լինելու: Մեր ամբողջ ասեղի կազմութիւնն այս տեսակ էր. նրա մէկ կողմում հիւսիսալին, միւս կողմում հարաւալին բևեռն էր, իսկ կենտրոնը (մէջ տեղը) մագնիսական ոյժ չունէր. երբ մենք կենտրոնից կիսում ենք, իսկապէս սպասելու էինք, որ մէկ կտորի վրայ պէտք է մնալ հիւսիսալին բևեռը, միւսի վրայ հարաւալինը. իսկ նոր ստացած ծայրերը չակտում է ունենան մագնիսական ոյժ: Ո՛չ, այս տեսակ բան չէ պատահում, ընդհակառակը նոր ստացած ծայրերից ամեն մէկն էլ լանկարծ զօրեղ կերպով այնպէս է մագնիսացել, ինչպէս միւս ծայրը: Ուրեմն երկու կտոր անելիս ոչ թէ կէս կէս մագնիսներ ենք ստակտում, ալ երկու նոր կատարեալ մագնիս. միայն տարբերութիւնն այն է, որ սրանք փոքր են:

Այս երկու նոր մագնիսների ծայրերը քննելով՝ կը տեսնենք, որ առաջուալ հիւսիսալին բևեռը դարձեալ իր տեղում է մնացել. իսկ միւս ծայրը, որ առաջ բոլորվին զուրկ էր մագնիսականութիւնից, այժմ դարձել է հարաւալին ընկեռու: Երկրորդ կտորի վրայ էլ հարաւալին բևեռը նոյնպէս իր առաջուալ տեղումն է, միայն սրա էլ ոչ-մագնիսական ծայրը՝ հիմա եղել է հիւսիսային ընկեռու:

Կամայ ակամայ հարց է առաջ դալիս. հապանէնչ է լինում այս նոր երկու մագնիսի մէջ տեղը: Եթէ երկաթի խարտոցուածքով փորձեր անենք, կը տեսնենք, որ նրանց կենտրոնները չունին մագնիսական ոյժ. թէւ ամբողջ ասեղի մէջ միւնչոյն տեղերը ցուց էին տալի կանոնաւոր ոյժ և խարտոցուածքներն իրանց էին քաշում, բայց այժմ կորցցել են այդ ոյժը:

Հիմա վեր առնենք կտրած կտորները, ծայր ծայրի մօտ այնպէս գնենք, որ մեր առաջուայ ամբողջ ասեղն ստանանք. փորձը շատ հասարակ, բայց վերին աստիճանի հետաքրքիր է. այսպէս անելիս կը տեսնենք, որ մի ամբողջ մագնիս ունինք, մէջ տեղից կտրուած մասը դարձեալ լանկարծակի կորցնում է իր մագնիսականութիւնը և մեր երկու մագնիսների կենդրանները նորից լետ են ստանում իրանց ոյժը: Նենց որ երկու կտորը միմեանցից հեռացնում ենք, իսկոյն նրանք դառնում են նորից մի

կատարեալ մագնիս երկու բևեռով և մի չեղոք  
(մագնիսականութիւնից զուրկ) կենդրոնով:

Ի՞նչպէս բացատրել այս երկութը, ի՞նչպէս  
գտնել այս գաղտնիքը: Սրանց պատասխանելու ենք,  
որքան ներկայ բնական գիտութիւնը կարողացել է  
մինչև այժմ մի բացատրութիւն ու պատասխան տալ:  
Բայց գեռ ամենից առաջ լիշենք այն, ինչ որ ան-  
ուրանալի փաստերն ու երկութները կատարելապէս  
հաստատում են:

Այն, կրկնում ենք, որ բնական ոյժերը հեքի-  
աթ համարող մարդիկ կարող են հեշտ կերպով շատ  
բան սովորել մի կտոր մագնիսից: Եթէ մեր աչքի  
առաջ սեղանի վրայ դրուած է լոկ մագնիսացած  
ասեղը, սրան նայելով՝ չենք կարող իմանալ, մագ-  
նիսականութիւն, ունի թէ ոչ. որովհետեւ ալդ ոյժը  
ինքն իր գլխին թողած, չէ ենթարկում մեր հինգ  
զգայարաններից և ոչ մէկին. ոչ կարող ենք լսել,  
ոչ տեսնել, ոչ շօշափել, ոչ համն առնել և ոչ էլ  
հոտը: Այն ինչ երկաթին մօտեցնելիս ամեն բան  
պարզում է, նրա առանձին տեսակ ոյժը մեզ  
համար լինում է անուրանալի փաստ. մի ոյժ, որ  
կարող է ծանր բաներ վերցնել. անդամ այժմ պատ-  
րաստում են այն տեսակ զօրեղ մագնիսներ, որոնք  
շատ մեծ ծանրութիւններ են բարձրացնում:

Այս փաստերը տեսնելուց և գիտնալուց յետոյ  
ընթերցող, այլ ես չես կարող ուրանալ ալդ ոյժի

գոյութիւնը. այժմ նրա ազգեցութիւնը և տեսնում  
ես և գիտես: Վերեսում տսել ենք, այստեղ նորից  
կրկնում ենք, որ դա մի տեսակ ձգողական ոյժ է  
և որոշ գէպքերում էլ վանողական ոյժ: Առանց  
երկաթի այս ոյժը բոլորովին ծածուկ ու անյալտ  
է, բայց հենց որ երկաթին է մօտենում, իսկոյն  
ցոյց է տալիս իր զօրութիւնը, իր գոյութիւնը:

Եթէ մենք սրա ձգողական ու վանողական ոյժը  
փորձերի ենթարկենք, կը տեսնենք, որ միւս առար-  
կաների, աստղերի ու մոլորակների պէս որքան հե-  
ռանում է տարածութիւնը, այնքան էլ թուլանում  
է ոյժը: Օրինակ երբ մի կտոր երկաթ երկու վեր-  
շոկ հեռու է մագնիսից, այն ժամանակ ձգողական  
ոյժը չորս անգամ թուլ է լինում, քան մէկ վեր-  
շոկ հեռու գտնուող կտորի վրայ:

Մինչև այժմ սովորել ենք երկու տեսակ ձգո-  
ղական ոյժ. առաջին, ամեն մի մարմնի ատօմնե-  
րի ձգողական ոյժ և երկրորդ, տարածութեան մէջ  
մարմինների միմեանց վրայ արած փոխադարձ ձգո-  
ղական ոյժ: Այս երկու տեսակի տարբերութիւնը  
հետևեալն է. ատօմների ձգողական ոյժի մօտ կայ  
և վանողական, մինչ գեռ տարածութեան մէջ մար-  
մինների փոխադարձ ձգողականութեան գէմ ու գէմը  
չկայ վանողական ոյժ: Բացի սրանից տաքութիւնը  
չափազանց զօրեղ կերպով է ազդում ատօմների  
ձգողական ոյժին, այն ինչ մարմինների ձգողակա-

նութեան վրայ չէ ազգում:

Այժմ մենք սովորում ենք երրորդ տեսակ ձգողականութիւն ալսինքն մազնիսի ծգողական ոյժ. ախտեղ երեսումեն առաջուալ ոյժերն որոշ չափով միացած: Բոլոր փորձերից պարզ տեսանք, որ մագնիսը ցոյց է տալիս ձգողական ոյժ և մօտիկ երկաթը քաշելով՝ իրան է կացնում, իսկ ուրիշ հանգամանքում էլ վանողական ոյժ առաջ բերելով, քշում հեռացնում է: Միևնույն ժամանակ փորձերով կարելի է տեսնել, որ մագնիսը տաքանալով՝ էր ոյժը բաւական կորցնում է. իսկ եթէ նրան կեծացնենք, այն ժամանակ բոլորովին կը զըկուի մագնիսական ոյժից: Սա այնքան հասարակ փորձ է, որ մարդ կարող է մագնիսացած ասեղը կրակի վրայ տաքացնել, կեծացնել և փորձեր կատարել:

Մինչև հիմա մեր սովորած ոյժերն ընդհանրապէս իրար հետ համեմատելով՝ տեսանք նրանց նման ու տարրեր կողմերը. այժմ անցնենք քիչ շատ մանրամասն քննելու մագնիսականութեան գաղտնիքը:

5 Մագնիսական երեսոյթների համար մի բացատրութիւն:

Այժմ փորձենք բացատրել մագնիսականութեան երեսոյթներն այն չափով, ինչ չափով կարողացել է ներկայ գիտութիւնը մի բացատրութիւն տալ:

Դատ պարզ է, երբ ասեղը և ընդհանրապէս երկաթն ու պողպատը կարող են մագնիսանալ, լինել որպէս մի մագնիս, մարդ ուղիղ չուղից անպատճառ ասելու է, որ նրանց մէջ մի բան ծածկուած, պահուած է: Այս ծածուկ բանին ինչ անուն էլ տանք, դա միենոյն է. նա ուրիշ ոչինչ չէ, եթէ ոչ՝ երկաթի, պողպատի բնական ու սովորական վիճակը. գըս համար էլ հարեւանցի կերպով նայելիս ու դատելիս մեզ չէ երեսում: Բայց հէնց որ երկաթն ու պողպատը մագնիսի երես են տեսնում կամ նրա հետ տրորւում են, իսկոյն այդ ծածուկ բանը զարթնում, լայտնուում է և տալիս է նրանց մագնիսական ոյժ:

Մինչև այժմ արած փորձերից տեղ տեղ մենք շատ տեսանք, որ երբ մագնիսով մի կտոր եր-

կաթ, պողպատ էինք մագնիսացնում, մեր առաջուայ մագնիսն ոչինչ չէր կորցնում իր ոյժից, նա մնում էր անփոփոխ, մինչև անդամ շատերի կարծիքով դեռ մի քիչ էլ գորանում է: Ուրեմն եթէ նա իր ոյժը պահում է, այն ժամանակ կարող ենք ընդունել, որ մագնիսական ոյժը չէ անցնում, չէ հաղորդում երկաթին և կամ պողպատին, այլ արդէն յայտնի մագնիսական ոյժը գրգռում զարթեցնում է երկաթի մէջ քնած ու ծածուկ մագնիսականութիւնը:

Այո՛, սա շատ զարմանալի է և գուցէ շատերին հէքիաթի պէս մի բան երևալ: Եթէ լաւ դիտելու, լաւ նայելու լինինք, կը տեսնենք, որ բնութեան մէջ պակաս չեն այդ տեսակ երևոյթներ: Օրինակ, շատ քիչ քացախը կարողանում է մի մեծ աման գինին քացիսեցնել. մի կտոր թթխմորը թթուեցնում է, ահագին տաշտով խմորը. ծաղիկ հիւանդութեան շատ աննշան թոյնը մարդու վրայ առաջ է բերում բազմաթիւ ծաղկի վերքեր, երբ արդէն մարմնի մէջ կայ միւսոյն թոյնից: Սրան մենք ասում ենք վարակում: մեր նպատակը չէր վարակման մասին խօսել, այլ միայն մատնացոյց արինք փաստեր, որ ամենաչնչին, ամենափոքրիկ մակարդը, թոյնը զարթեցնում է ամբողջ զանգուածի մէջ իր նման ոյժ կամ նրան էլ վարակով իրան նման է գարձնում:

Եթէ մենք ուզենանք մագնիսանալու համար էլ մի խօսքով բաւականանալ, այն ժամանակ կ'ասենք, որ մեր մագնիսը մօտենալու պէս վարակում է պողպատն ու երկաթը. տրորելով աւելի կատարեալ է լինում այդ վարակումը:

Եթէ մի քիչ էլ հեռուն գնանք և քնեննք, այն ժամանակ կարելի է աւելի մօտենանք մագնիսականութեան գաղտնիքին:

Հասկանալի է, որ մագնիսացած երկաթը կամ մագնիսը իր մէջ պէտք է ունենալ մի ծածուկ բան. նոյն էսկ սա է, որ իր քնած ու հանգիստ դրութիւնից գուրս գալով՝ բաժանւում է երկու բևեռների և ցոյց է տալիս իր ոյժը: Տեսնում ենք, հէնց որ երկաթը և կամ մեր ասեղը մագնիսական ոյժ է ստանում, իսկոյն այդ մագնիսականութիւնը երկուսի բաժանուելով՝ մէկ ծայրում երևում է որպէս հիւսիսային, միւսում որպէս հարաւային ըեւենո: Արդեօք կարելի է կարծել, թէ այս ոյժը կազմուած է մէկ նիւթից, ոչ երբէք. նա մի պարզ, հասարակ բան չէ, այլ բարդ է: Դրա համար էլ կարելի է ընդունել, թէ կայ հիւսիսային ու հարաւային բևեռի մագնիսական նիւթ, որոնք անբաժան իրար հետ կապուած գոյութիւն ունին հասարակ կամ չմագնիսացած երկաթի ու պողպատի մէջ: Այն ինչ երբ երկաթը կամ մեր ասեղը քսում է մագնիսին, անմիջապէս երկաթի մագնիսական նիւթը զարթնելով՝

բաժանւում է երկու մասի. մէկ մասը հաւաքւում է մի ծալրում, իսկ միւս մասն էլ երկրորդում, այսպէս առաջ է գալիս հիւսիսային ու հարաւային բևեռ:

Իշարկէ այս բացատրութիւնը մի ենթադրութիւն, հիւսիսային մագնիսական նիւթը բուռն է. միայն այժմ տեսնելու ենք, թէ հիմք կայ ընդունելու, որ այս ենթադրութիւնը խսկապէս ճիշտ է:

Զալէտք է այնպէս կարծել, թէ մեր մագնիսացած ասեղը հիւսիսային մագնիսական նիւթը բուռովին քշում է դէպի մէկ կողմը, իսկ հարաւայինն էլ ամբողջովին դէպի միւս կողմը. այնպէս որ երկու նիւթը իրարից բաժանուած հաւաքւում են միմիայն ծալրերում. երբէք այս տեսակ բան չէ՝ պատահում: Չէ որ մենք արդէն տեսանք, երբ ասեղը մէջ տեղից կիսում ենք, այն ժամանակ չենք ստանում երկու մագնիս, մէկը միմիայն զուտ հիւսիսային, միւսն էլ միմիայն զուտ հարաւային բևեռով, այլ ստանում ենք երկու կատարեալ մագնիս: Մի անգամ էլ միւսոյն փորձն անենք տարբեր ձևով. այժմ մեր ասեղի հիւսիսային բևեռից կտրենք մի փոքրիկ կտոր. այս փոքրիկ կտորն էլ լինում է մի կատարեալ մագնիս և հէնց կտրած տեղը գտնում է հարաւային բևեռ: Այն, կարող ենք մագնիսացած ասեղը հազար կտոր անել, դարձեալ ամեն մի կտորը գտնում է կատարեալ մագնիս, ալիսինքն կ'ունենայ-

հիւսիսային, հարաւային բևեռ և չեզոք կենդրոն: Դըա համար էլ չի կարելի ասել, թէ ասեղի մէջ հիւսիսային ու հարաւային մագնիսականութիւնը միմիայն նրա երկու ծալրերում է հաւաքւուած: Ընդհակառակն աւելի շուտ կարելի է կարծել, թէ ինչպէս ասեղի երկաթը կամ ոլողպատն առանձին առանձին ատօմներից է կազմուած, այնպէս էլ մագնիսական երկութները բացատրելու համար պէտք է ընդունենք, որ բաժանելու, կտրելու ժամանակ ամեն մի ատօմ՝ իր հետ տանում՝ է մագնիսական երկու նիւթն էլ. ուրիշ կերպ աստծ իւրաքանչիւր տաօմ մի փոքրիկ մագնիս է հիւսիսային ու հարաւային բևեռներով:

ալսի դրութեան մէջ մագնիսականութիւնը քնած ու հանգիստ է և չի կարող մի ուրիշ երկաթ իրան քաշել:

Այժմ ասենք, թէ այդ ասեղի մէկ ծալը քսում ենք մագնիսին. հարցնենք մեզ ու մեզ, արդեօք ինչ կարող է պատահել այս դէպքում:

Եթէ ընդունենք, թէ մենք ունինք մազից էլ շատ շատ բարակ մի ասեղ, բայց այնքան բարակ որ կազմուած լինի երկաթի մի մի հատիկ ատօմների իրար մօտ շարուելուց: Խսկապէս իրականութեան մէջ չկար այս տեսակ բարակ ասեղ, միայն առժամանակ պէտք է մեր երևակալութիւնով ստեղծենք:

Այս երևակայած ասեղի մէջ առանձին առանձին ատօմները մէկիկ մէկիկ միմեանց մօտ կարգով շարուած են. իւրաքանչիւր ատօմ չմագնիսացած երկաթ է և դրա համար բոլորն էլ միասին վերցրած ցոյց չեն տալիս մագնիսական ոյժ: Ամեն մի ատօմ իր մէջ և չորս կողմում ծածուկ պահում է երկու տեսակ մագնիսական նիւթն էլ այնպէս որ, հիւսիսային ու հարաւային բևեռի մագնիսականութիւնը իրար հետ միացած ու խառնուած է: Այս-

Բայց չպէտք է մոռանալ, որ առաջի ատօմի մօտ կայ երկրորդը. միևնույն ժամանակ արդէն գիտենք, որ առաջինն էլ իր հիւսիսային բևեռով

6 Մագնիսացնելիս ի՞նչ է պատահում ասեղին:

սրան է քսւում, ուրեմն նա պէտք է երկրորդ ատօմի հարաւային մագնիսականութիւնը իրան քաշէ, խոկ հիւսիսալինը դէն քշէ. այս երկրորդ ատօմն էլ գառնում է մի շատ փոքրիկ մագնիս: Երկրորդ ատօմն էլ նոյն կերպով ազդում է երրորդին. սա էլ չորրորդին և այսպէս շաբունակում է մինչև վերջին ատօմը, որը իր հարաւային բևեռով կպած է լինում իր հարեան ատօմին, մինչ դեռ ասեղի վերջին ծալրում մնում է հիւսիսային ընթեռը:

Ահա թէ ինչ է պատահում ասեղին, երբ նա քսւում է մագնիսի մի որ և է բևեռին:

Եթէ այս բոլորը կանոնաւոր կերպով մեր աչքի առաջ քերենք և մտածենք, այն ժամանակ շատ աւելի պարզ հասկացողութիւն կ'ունենանք մագնիսական ոլժի մասին:

Հնդհանրապէս ասում են. մագնիսը քաշում է երկաթը, հէնց ալգպէս էլ երեւում է. բայց խիստ մտքով վեր առած այդպէս չէ: Մագնիսը քաշում է ոչ թէ երկաթն, այլ մագնիսականութիւնն, որն երկաթի իւրաքանչիւր ատօմի մէջ կայ: Մագնիսի բեռոը ունի իր ծալրերում բաժանուած ու զատուած մագնիսականութիւն: Այս բաժանուած մագնիսականութիւնը ձգտում է ուրիշի հետ միանալ և դրա համար իրան քսուող երկաթի ատօմի հակառակ կամ ոչ նման մագնիսականութիւնը քաշում է, իսկ նմանը գէն է քշում: Այսպէս ուրեմն իրան քսուող

երկաթին դարձնում է նոր մագնիս:

Այս է պատճառը, որ մագնիսից կախ ընկած ասեղով կարող ենք մի ուրիշ ասեղ էլ վերցնել. որովհետեւ ասեղը ինքն մագնիս է դարձած և երկրորդին քսուելով՝ նրան էլ վարակում ու մագնիսացնում է: Միւնոյն բանը կարելի է ասել երկաթի խարտոցուածքի համար, որը բարակ մազերով մօրուքի նման կախ է ընկնում մագնիսի ծալրերից:

Օրովհետեւ մագնիսացած ասեղն ուրիշ բան չէ, եթէ ոչ՝ մագնիսացած ատօմների մի շարք, գրահամար էլ կարելի է մագնիսը կտոր կտոր անել և միշտ ամեն մի փոքրիկ մաս իր գլխին էլի կատարեալ մագնիս է: Բաւական է մի քիչ մտածել և կարող ենք մնացած խորհրդաւոր երևոյթներն էլ նոյն կերպով բացատրել. հէնց այդ պատճառով էլ ճշմարիտ ու հիմնաւոր է համարւում այս ենթադրութիւնը<sup>\*</sup>):

\*) Մագնիսական ոլժի համար կայ մի ուրիշ հիպոտէկ (ենթադրութիւն) էլ: թէ մի որ ևէ մագնիսացած ասեղ ամենամար մասերի բաժանուելով՝ տալիս է փոքրիկ մագնիսներ իրկու բնաւուած ու Տի չեռաց էլուակ, այս հիման վրայ ունանք մերժում են մագնիսի նիւթի գոյութիւնը և ընդունում են, թէ իւշաւանչեալ որո՞ւ՞ն չափն է: Այս բանը աւելի պարզ կը լինի, եթէ երեսկայինք մի շաբթ ատօմներից կապնուած շատ բարակ ասեղ:

Գուցէ ընթերցողները հարցնեն, թէ ինչո՞ւ հասարակ ասեղի, երկաթի ու պատճառի մէջ մագնիսականութիւնը չէ երեսում, չէ արտայապտում, եթէ իւրաքանչիւր ատօմ մի կատարեալ մագնիս է: Վերջին հիպոտէկը պատճառիսանում է այսպէս:—այդ ժամանակ ատօմների բենեները խառնիթուն են զասաւորուած. մինչ զես երբ նրանի մասնում են բնական և կամ արհեստական մագնիսին, այդ միջոցին հիանալիքին բենեները ուղղում են զէպի մի կողմը, իսկ հարաւայինը՝ նրանց հակառակ կողմը. ահա այս զէպիսում մագնիսականութիւնը զարթնած է լինում և արտայապտում է իր ոյժը:

Անշուշտ հարց է ծագում. եթէ մագնիսական երկու նիւթերը կամ հիւսիսալին ու հարաւալին մագնիսականութիւնը միշտ ձգտում են իրար հետ միանալ, համար ինչու համար մագնիսացած երկաթը պահում է իւր ոյժը: Ինչու համար գլխաւոր մագնիսը հեռացնելուց յետոյ իւրաքանչիւր ատօմի մէջ եղած մագնիսական երկու նիւթերը իսկոյն իրար հետ չեն միանում:

Իսկապէս այդ տեսակ բան պատահում է. սովորական փափուկ երկաթը շուտով մագնիսանում է, բայց շուտով էլ կորցնում է իր մագնիսականութիւնը, երբ նրա վրայից հեռացնում ենք գլխաւոր մագնիսը:

Ընդհակառակն, ամուր ու պինդ երկաթը կամ պողպատը դժուար է ընդունում մագնիսականութիւն. պողպատի ատօմի մէջ մագնիսական երկու նիւթերը գժուար են բաժանում, բայց դրա համար էլ մի անգամ բաժանուածները նորից իրար հետ չեն միանում, եթէ գլխաւոր մագնիսը հեռացնում ենք. ուստի այդ է պատճառը, որ մէ անգամ մագնիսացած պողպատը պահում է իր ոյժը, ինչ պէս օրինակ մեր կայծաքարի պողպատը, ասեղը և ալին:

Դ ծածուկ նիւթ կամ ֆլուլիում:

Մենք տեսանք, որ երկաթի մէջ թագնուած պահուած է մի բան. նա է պատճառ դառնում մագնիսական երկութների տռաջ գալուն. այդ անտեսանելի բանին ասացինք ծածուկ նիւթ, որն երբ բաժանուած չէ իր երկու մասին (հիւսիսալին ու հարաւալին բեկոների) այն ժամանակ չի կարող, ցոյց տալ իր ոյժն ու գօրութիւնը. բայց երբ երկաթը մօտենում է մագնիսին, իսկոյն նրա ծածուկ նիւթը երկու մասի բաժանուելով՝ առաջ է բերում մագնիսական երկութներ:

Արդեօք իրաւունք ունինք սրան նիւթ տսել, թէ ոչ. այդ մասին կարիք չկայ երկար ու բարակ խօսել, վիճաբանել: Ընդհանրապէս նիւթ ասելով հասկանում ենք այնպիսի բան, որը գոնէ ծանրութիւն ունի: Մենք կարող ենք նիւթը կշռել, բայց մագնիսականութիւնը չէ կշռում և գրա համար էլ զիտութեան մէջ չեն ասում մագնիսական նիւթ, այլ մագնիսական ֆլուլիում:

Մարդկային քննող ու հետազօտող միտքը այս դէպքում էլ գտնուում է բնական գաղանիքի մի

ուրիշ տեսակ սահմանում։ Մինչև այժմ մենք սովորել էինք ամբողջ բնութեան մէջ տիրապետող ձգողական ու վանդական ոյժը։ Հիմա միևնունը տեսնում ենք մագնիսի մէջ էլ։ Մինչ դեռ առաջ մենք հարկադրուած չէինք ընդունել, թէ ատօմի մէջ մի անձանօթ բան գոյութիւն ունի, այժմ մագնիսականութեան երկութներն ստիպում են այդ անելու, թէ երկաթի ատօմի մէջ գոյութիւն ունի մի ծածուկ բան։ սա իր բնական վիճակից խանգարուելով, գուրս գալով՝ բաժանուած է երկու մասի և կարող է իր ցանկացածի պէս շարժուել։ կարծէք մի առարկալ լինէր, որը մարդ կարող էր մէկ տեղից միւսը տեղափոխել։

Առաջ կարող էինք միայն ծածուկ ոյժ ասելով բաւականանալ։ այժմ մագնիսի կամ լաւ է ասել երկաթի մասին խօսք լինելիս՝ անշուշտ պիտի ընդունենք ծածուկ նիւթ կամ ֆլուդիում։ Ինչ անուն էլ ցանկանանք տալ, դա միևնույն է։ ինչպէս տեսանք, զլխաւորն այն է, որ ձգողական, վանդական ու մագնիսական ոյժ՝ այս բոլորը կապուած են մարմնի կամ նիւթի հետ։

Յետոյ մենք տեսանք, որ փափուկ երկաթը իր ծածուկ նիւթը շատ հեշտ է բաժանուած և հեշտ էլ միացնուածէ, երբ նրա մօտից հեռանուած է զլխաւոր մագնիսը. փափուկ երկաթը շուտ է մագնիսանուած և շուտ էլ կորցնուած է իր մագնիսականու-

թիւնը. այն ինչ պինդ երկաթն ու պողպատը բոլորովին ընդհակառակն են։ Սրանք այնպէս շուտ չեն մագնիսանուած, բայց հեշտ էլ չեն կորցնուած իրանց մագնիսականութիւնը. այն, նրանք կարող են շատ տարիներ պահել մագնիսական ոյժը, երբ արդէն մի անգամ մագնիսացած են։

Այս երկու տեսակ երկաթի տարբերութիւնը նրա մէջն է որ փափուկ տեսակն ածուխի մէջ կէծացնելուց յետոյ կամաց կամաց է պաղեցրած, իսկ պինդ երկաթը կամ պողպատը կէծացրած ժամանակ մի անգամից սառը ջրի մէջն են կոխուամ։ Նատ պարզ է, որ կէծացնելիս երկաթը լայնանուած է և նրա ատօմները միմեանցից հեռանուած են. երբ նրան միանգամից յանկարծակի սառեցնուած ենք, այն ժամանակ ատօմները չեն կարող այնպիսի արագութիւնով նրանց առաջուայ վիճակին վերադառնալ, ինչպէս այդ բանը կարող է պատահել կամաց կամաց սառեցնելիս։ հէնց դրա համար էլ այս տեսակ երկաթը կամ պողպատն անշուշտ պէտք է մի առանձին լատկութիւն ստանալ մագնիսականութիւնը երկար պահել և թուլ չտալ բաժանուած նիւթերին այնպէս հեշտ կերպով իրար հետ միանալու։

Այսքանը միայն, ինչ կարելի էր ընդհանրապէս ասել մագնիսականութեան գաղտնիքի բացատրութեան համար։ Խւրաքանչիւր մարդ պէտք է աչքի առաջ ունենայ, որ բնագիտութիւնը գեռ ևս

նոր է սկսել իր գիտնական լազմութիւնները. նրա արած մեծ քայլերը շատ կարճ ժամանակուայ արդիւնք են. նա դեռ ևս իր օրորոցի մէջն է. նրան մնում է դեռ շտու, չափազանց շատ բան անելու:

Անկասկած իւրաքանչիւր մարդ ինքն իրան հարց է տալու. արդեօք միայն երկաթը պէտք է ունենայ այս խորհրդաւոր մագնիսական նիւթը. միջեւ բնութեան մէջ եղած բոլոր առարկաները կամ գոնէ մի քանիսն էլ չունին միւնոյն նիւթից:

Այժմեան քննութիւնների համաձայն կարելի է այս հարցին բաւականին հաստատ պատասխան տալ, թէ բոլոր առարկաների մէջ գոյութիւն ունի մագնիսական նիւթը. որովհետև հէնց հետեւել զլիսի մէջ տեսնելու ենք, որ նոյն իսկ ամբողջ երկրագունադը մագնիսացած է և ազդում է ինչպէս երկաթէ մագնիս:

Այս բոլորից յետոյ բնականաբար հարց կը ծագի. հապա ինչո՞ւ չենք կարող միւս առարկաներն էլ մագնիսացնել:

Սա կարող է երկու պատճառից առաջ գալ. կամ մենք չենք կարող մագնիսական նիւթը բաժանել իր երկու մասին, որովհետև չունինք առայժմ ուրիշ աւելի կատարելագործուած միջոց, և կամ այդ բանը պատահումէ մի ակնթարթում ու շուտով էլ միանում է:

Արդեօք չի կարելի երկաթի մագնիսականու-

թիւնը անցկացնել այնպիսի առարկաների վրայ, որոնք երկաթից չեն: Կամ չպէտք է լաջողուի մի որ և է կերպով երկաթի մագնիսական ծածուկ նիւթից փոքր ինչ խլել, վերցնել:

Մրան կարելի է պատասխանել, որ մագնիսական ոլժը մինչև այժմ յաջողուելէ անցկացնել շատ ուրիշ առարկաների վրայէլ. միայն նրանք այն տեսակ մագնիս չեն գառնում, ինչպէս երկաթը: Իսկ երկրորդ հարցին գալով՝ վերջապէս պիտի ասենք, որ երկաթից չի կարելի մագնիսական նիւթը խլել, հեռացնել. նա չէ հոսում մէկ առարկայից միւսի մէջ, ինչպէս դա պատահում է ուրիշ ծածուկ նիւթի, օրինակ՝ էլէքտրական նիւթի հետ. յետոյ մենք կը տեսնենք, որ կարելի է էլէքտրականութիւն առաջ բերել, հաւաքել, ամուր պահել և վերջը մեր ուղածի պէս բաց թողնել: Միայն ընթերցողը թող չկարծէ, թէ էլէքտրականութիւնն ու մագնիսականութիւնը բոլորովին զանազան բաներ են, ընդհակառակը, շատ մօտ ու սերտ ազգական են:

8 Ի՞նչպէս կարելի է բոլոր առարկաներին  
մազնիսացնել:

Վաղուց յայտնի էր, որ մագնիսն իրան է քաշում ոչ միայն երկաթը, այլ նիկէլն ու կօբալտն\*) էլ, թէև ոչ այն չափով, բայց դարձեալ ազդում է այս երկու մետաղին ևս: Մանաւանդ այս մասին եղած հայեացքն ու հասկացողութիւնը բոլորովին փոխուեց, երբ անգլիացի ֆառագէլ անունով գիտնականը էլէքտրականութիւնով առաջ բերեց շատ գորեղ մագնիս և սրանով նոր փորձեր արաւ: Նա գորեղ մագնիս և սրանով գոր փորձեր արաւ: Նա գորեղ տուեց, որ բոլոր մետաղները, բոլոր հեղուկներն, բոլոր նիւթերը, մինչև անգամ գաղաձե մարմինները այսպէս թէ այնպէս ազդւում են մագնիսից:

Եթէ մի շատ փոքր փայտի (հենց լուցկու փայտից էլ փոքր) մէջ տեղից թել կտպենք ու քաշ տանք պայտաձե մագնիսի կամարից, այնպէս որ նա բեկոններից մի քիչ բարձր կախ ընկած լինի և կարեւուներից մէջ պահանջանակ ամեն կողմ ազատ շարժուել, այն ժամանակ ամեն կողմ ազատ շարժուել, այն ժամանակ:

\*) Յանհուլստելլեն. Արանք երկուոն էլ երկաթին շատ նման մետաղներ են:

նակ կը տեսնենք, որ փայտի ծալրերը մագնիսից փախչում և նրա կողքերի արանքում կանգնած մնում են. այսպէս ասած փայտիկը մագնիսի կողքերի հետ միասին կազմում է խաչաձե մի բան:

Կախ տալիս փայտի նման խաչաձե գիրք են բռնում և հետևեալ մարմինները. ցինկ, կլայիկ, սնդիկ, արծաթ, ոսկի, արծիճ, պղինձ, ֆուֆօր, ծծումբ, մեղրամոմ, օսլայ (նեշաշտայ), շաքար և այլն: Շատ պարզ է, որ մագնիսը սրանց վրայ էլ այնպէս է ազդում, ինչպէս փայտի վրայ: Որովհետեւ այնպէս մարմինները փախչում են իրանց ծալրերով մագնիսից, կարծէք նրանք մի տեսակ հակարենութիւն ունենալ են, դրա համար էլ ասւում են հակամազնիսական մարմիններ: Նոյն իսկ մաքուր ջուրն էլ (անկան մարմիններ: Նոյն իսկ մաքուր ջուրն էլ (անձրեսի ջուր կամ գոլորշիններից ստացած ջուր) պատկանումէ սրանց կարգին: Օրինակ եթէ ժամացուցի ապակի վեր առնենք և նրա մէջ մի քիչ մաքուր ջուր լցնելով՝ բռնենք պայտաձե զօրեղ մագնիսի բևեռների մէջ, կը աեսնենք, որ բևեռներին նայող ջուրի կողքերը ներս ենիփախչում, ջուրը ձուաձե երջարանում ու մէջտեղից աւելի ուռչում է:

Երբ փայտիկի փոխանակ վեր առնենք մի փոքրիկ ասեղ ու միենոյն փորձն անենք, այս գէպքում էլ ասեղի ծալրերն ուղղակի կպչում են մագնիսի կողքերին: Այսպէս ասեղի նման մէկ բևեռից գէպի միւսն են տարածւում իրանց ծալրերով արդէն ինքն

երկաթը, նիկել, կօքալտ, փայտածուխ, թռւղթ, կնքամոմ և ուրիշները։ Որովհետև սրանք էլ մագնիսին բարեկամ նն, իրանց ծայրերով նրան են կըպ-չում, դրա համար ասւում են մագնիսական մարմիններ։

Ֆրանսիայի մի գիտնականի էլ յաջողուել է շատ խելացի կերպով փորձեր անել, թէ գազաձև մարմիններն ինչ աստիճանի ընդունակ են մագնիսանալու. նա գտել է, որ մագնիսը գազաձև մարմիններից իրան է քաշում միայն թթուածինը, իսկ ածխաթթուն, բորբակածինը, վառելու գոզը, (ջրածինը) սնդիկի ու ջրի գոլորշիները քշում հեռացնում է։ Ուրեմն թթուածինը պատկանում է մագնիսական մարմիններին, մինչ գեռ միւսները հակամագնիսական են։

Միայն վերջը ֆառագէ կարողացաւ աւելի մանրամասն ցուց տալ, թէ բոլոր գազաձև մարմինների միջից միմիայն թթուածինն է, որ իսկապէս դէպի մագնիսն այն դիրքն է բռնում, ինչ դիրք բռնում է երկաթը. մինչև անգամ նա էլ բաժան-ւում է հիւսիսային ու հարաւային բևեռների։ Այս կարծիքը զումբօլտ անունով գիտնականին վերջը առիթ եղաւ ենթագրելու, թէ որովհետև երկիրն ամեն կողմից պատռծ է թթուածինով և սա էլ մագնիսական յատկութիւնով նման է երկաթին, ապա ուրեմն մեր երկարգունալը շըցապատուած է

երկաթէ բարակ կեղեռով. որն իր մագնիսականութիւնը երկրից է ընդունում։

Իհարկէ գեռ ևս լաւ քննուած չէ թթուածինի մագնիսականութեան հետաքրքիր յատկութիւնը, որպէսզի կարելի լինի ուրիշ եղբակացութիւններ ևս անել։ Բայց միայն մի ուրիշ գիտնականի շնորհիւ յայտնի է և այսքանը, որ թթուածինի մագնիսականութիւնն երեք հազար անգամ թուլ է, քան երկաթինը։ Սա նշանակում է մի լոտ (3 մասալ) թթուածին մագնիսացնելու համար պէտք է այնքան զօրեղ մագնիս, ինչ զօրեղութեան մագնիս հարկաւոր է 3000 լոտ, այսինքն մօտ  $2^{1/2}$  պուդ երկաթը մագնիսացնելու համար։

Ինչ էլ ուզում է թող լինի, բայց և այնպէս բոլորովին հաստատ է, որ մագնիսականութիւնը ոչ միայն երկաթի մէջ գոյութիւն ունի, այլ եթէ այդ ոլժը վերագրում ենք մի ծածուկ նիւթի կամ ֆլուդիումի, այն ժամանակ նա տարածուած է ամբողջ բնութեան մէջ։\*)

\*) Ծառավառակերն. Անհրաժեշտ է ասել, որ հակամագնիսական երեսթները ներկայ քննութիւնների համաձայն առաջ են դալիս նրանից, որ շրջապատ օդն աւելի զօրեղ կերպով է մագնիսանում, քան թէ իրանք հակամագնիսական մարմինները վաստ, ցինկ, կլավիկ և այլն։ Եթէ փարձը կատարենք մի այնպիսի ապակեայ ամանի տակ, որից օդը միքենայով բարուրային զուրս ենք հանեմ, այն ժամանակ կը տեսնենք, որ հակամագնիսական մարմին էլ օրինակ փայտը դարձեալ իր ծայրերով կազում է պայտաձև մագնիսի կողքերին այնպէս, ինչպէս երկաթիք։ Աջքի առաջ ունենալով, որ ընթերցողներից շատերը միշտ շումին այդ փարձը անձամբ կատարել ու համոզուել, բաւականա-

Այժմ գանք երկրագնտին: Նատ առաջուց զննողութիւններով համարեա՛ միւնոյն մտքին էին եկել, թէ մեր երկիրն էլ պէտք է ընդունել որպէս մագնիս. դրա համար աշխատելու ենք առաջ բերել երկրագնտի մագնիսականութեան հետաքրքիր երևոյթները:

Արդէն մեզ լայտնիէ, որ մագնիսացած ասեղը թելով կախելիս մէկ ծալրով դառնում է դէպի հիւսիս, իսկ միւսով դէպի հարաւ. միւնոյն ժամանակ ճանապարհորդութեան, մանաւանդ ծովագնացութեան համար շատ կարեոր կողմնացոյցն (կօմպաս) էլ հէնց նոյն օրէնքի վրայ է հաստատուած:

Հիմա հարց է ծագում. որտեղից է առաջ գալիս ուշադրութեան արժանի ալս երևոյթը: Ինչո՞ւ մագնիսի ծալրերը դէպի հիւսիս ու հարաւ են նայում:

Այս հարցին կարող է շատ լաւ պատասխան տալ հետևեալ հասարակ փորձը. —

Մեր մագնիսացած մեծ ասեղը կամ մագնիսը սեղանի վրայ, արդէն մեզ լայտնի են նրա հիւսիսային ու հարաւային բեկոները. յետոյ վեր

ցանք այս համառոտ բացարութեամբ: Ուրեմն շատ պարզ է, որ օդով լիքը տարածութեան մէջ կատարուող փորձերի վրայ հիմնուած կարող ենք մարմիններին մագնիսական կամ հակամագնիսական անունը տալ լոկ արտաքին երկողիները միմեանցից զանազանելու համար. ապա թէ ոչ ինչպէս տաել ենք, նորից կրկնում ենք, որ մագնիսական ոյժը կամ գլուղիումը միւնոյն է բոլոր մարմինների մէջ:

առնենք մի փոքրիկ ասեղ, մագնիսացնենք և թելից կախ տալով՝ որոշենք նրա բևեռները: Առաջ ու առաջ թելով կապած ասեղը քաշ տանք մեր մեծ մագնիսի հիւսիսային բեկոնի վրայ այնպէս, որ ասեղը նրանից մի մատ բարձր լինի. Հիմա օրօրենք, որքան ուզում ենք, երբ շարժելուց գագարում է, իսկոյն սեղանի վրայ դրուած մեծ մագնիսի հիւսիսային բեկոնը իր կողմն է դարձնում ասեղի հարաւային բեկոնը, իսկ հիւսիսայինը դէն է քշում: Այժմ ասեղի տեղը փոխենք ու կախենք մեծ մագնիսի հարաւային բեկոնի վրայ դարձեալ առաջուայ պէս մի մատ բարձր. շարժենք, որքան քեֆերս տալիս է. հէնց որ կանգ է առնում, ալս անդամ մեծ մագնիսի հարաւային բեկոնը իր կողմն է դարձնում ասեղի հիւսիսային բեկոնը, իսկ հարաւայինը քշում հեռացնում է: Վերջապէս ասեղը քաշ տանք մեծ մագնիսի վրայ՝ ուղիղ մէջ տեղը. շարժենք, դարձեալ որքան ուզում ենք. կանգ առնելուց յետոյ արդիւնքը մնում է նոյնը. մեր ասեղը իւր հիւսիսային բեկոնով նորից նայում է դէպի մեծ մագնիսի հարաւային բեկոնը, իսկ հարաւայինով դարձած է դէպի մեծ մագնիսի հիւսիսային բեկոնը: Կարող ենք ասեղի փոխարէն վեր առնել մի փոքրիկ կողմնացոյց: Հետևանքը կը լինի դարձեալ միւնոյնը:

Ուրեմն մենք տեսնում ենք, որ մեծ մագնիսի հիւսիսային բեկոնը քաշում է փոքրիկ մագնիսի

Հարաւային բևեռը, իսկ նրա հարաւայինը՝ փոքրիկի հիւսիսայինը:

Այս փոքրիկ օրինակից պէտք է պարզ լինի, թէ իսկապէս որտեղից են առաջ գալիս մեր մագնիսի բևեռները. անպատճառ երկրագունդը այս գէպքում մեր մեծ մագնիսի տեղն է բռնում և իր վրայ գտնուած փոքրիկ մագնիսներին ուղղութիւն է տալիս նոյն իսկ շարունակ կատարուող փորձերը բերել են այն մաքին, որ երկրագունդը մի մեծ մագնիս է կամ զոնէ նա ազդում, ներգործում է ինչպէս մեծ մագնիս:

9 Երկրի մագնիսական ոյժը:

Իսկապէս բոլոր քննութիւններն ու հետազոտութիւնները բերել են այն մտքին, որ երկիրը ոչ միայն մեծ մագնիս է, այլ նա մագնիսական ոյժի մի տեսակ շտեմարան (ամբար) է. Նրա մէջ էլ կայ այն ոյժն, որը հաստատ ու շատ որոշ կերպով երևում է երկաթի և մէկ մասով էլ բոլոր միւս մարմինների մէջ, ինչպէս արդէն տեսանք:

Իհարկէ առաջ չեին կարող այս միտքն ընդունել. ընդհակառակը շատերը կարծում և հաւատում էին, թէ երկրի մէջ երկաթէ մեծ մագնիս կամ ահագին իսկական մագնիս կայ, որն ուղղութիւն է տալիս մագնիսացած ասեղին ու կողմնացոցին: Բայց մարդիկ նոր նոր քննութիւններ ու դիտողութիւններ անելով տեսան, որ մագնիսը միշտ միւսոյն գիրքը, միւսոյն ուղղութիւնը չէ բռնում, այլ շարունակ օրօրուելով՝ քիչ թէ շատ ծուռում է իր գիրքից: Լինում են ըոսէներ, երբ հիւսիսափայլ և կամ հարաւափայլ է պատահում երկրի բևեռներում,\*)

\*) Ծանչեւալիւն. Հիւսիսափայլն ու հարաւափայլը բաւականին նման են կայծակին: Դիշնը ժամանակ կայծակ պատահելիս մի ակն-

իսկոյն ամբողջ երկրագնատի վրայ եղած՝ բոլոր մագնիսացած ասեղները զգալի կերպով օրօրւում և ծըռւում են իրանց ուղղութիւնից. երբ նկատեցին անգամ, որ առանց մի որևէ զգալի պատճառի միշտ տատանումների, օրօրումների են ենթարկում մագ-

թարթում լուսաւորում են մեր առաջ գտնուած չինութիւնները, սարերը, գաշակերն ու ձորերը. թէն փարզինարար սարսափում ենք, բայց դա հետ միասին հիանաւմ, զարմանում ենք այն զեղեցիկ տեսարանով, որ մեր չորս կողմում նկարում է սրանցիկ պատճեր և կարճ ժամանակից յետոյ զարձեալ թարգւմ է մերութեան մէջ: Դա բնութեան մէջ եղած էլքարականութեան արգինքն է, որի մասին առանձին գրքունիվ աւելի մտնարած իր խօսնքը. բայց առ այժմ այրաքանը կարել է ասել, որ երբ սաթը մահուով արորենք մուլտ տեղում մօնեցնենք մեր մատին կամ մէկ ուրիշ առարկալի, զլ լսով թեթև ճայթոց և առաջ կրտայ փորբիկ բայց—կապսա կայծ. մինենց բանն է պատահում, երբ սովորական խէժէ սանրով մուլտ տեղում մագերս ենք սանրում. հնայ այդ փորբիկ կայծը առուստ է էլքարական կայծ. իսկ այն ոյժը, որը կայծն է առաջանաւմ, զուշում է էլքարականութիւն: Կայծակն էլ նոյն բանն է, միշտ շատ մեծ ու զօրեղ չափով:

Ինչպէս վերջին քննութիւնները ցոյց են տալիս, հիմնախաղը ու հարաւափայն էլ առաջ են զալիս էլքարական ոյժից: Մրակն պատահում են միմիայն երկրագնախ հիմնախին ու հարաւային ծայրերում կամ թեռնուներում, զբա համար երկուախն միասին կարող ենք ասել բնաւագայ: Մեր կողմերում աւելի յացանի է հիմնախալիք, քանի որ Կոկասը, եւրոպան և որից երկիններ զանուամ են հիմնախին կիսագնառ, որաեղի բնակիչներին կարող է երևալ միմիայն հիմնա-

խափայլ: Տարբանայ չորս եղանակներում էլ պատահում է բնեռափայլ, բայց տարիների ընթացքում հաւաքած փաստերը ցոյց են տալիս, որ տանից շատ լինում է աշնան ու գարնանը, իսկ ամիսների վերաբերմամբ՝ առքինին ու սեպտեմբերին: Չատ հաւանական է, որ բուն րեեռներում ամեն գիշեր է լինում բնեռափայլ. մանաւանդ ուշագրութեան արժանի է և այն, որ ինչ ժամանակ պատահում է հիմնախափայլ, մինենց բոպէին ամենահաւատնորդէն տեղի է ունենում նա և հարաւափայլ. չնայած դրան՝ բնեռներից նեռու ընկած տեղերում կամ շատ ուշ—ուշ է երեսում և կամ բոլորին չէ ելուում:

Եթէ առանձնապէս խօսնիք հիմնախափայլ մասին, կարող ենք տաել, որ արեղակի մտնելուց երեք կամ չորս ժամ անց երկրագնատի հիմնախափային կողմը երբեմն ներկում է զեղին դպյուն. յետոյ կաթցց—կամաց սպիտակագոյն կամարաձև լոյս է առաջ զալիս, որից

նիսացած ասեղները՝ մինչև անգամ կանոնաւոր կերպով օրուայ այս և այն ժամին զանազան փոփոխութիւններ են կրում բոլոր մագնիսները, այն ժամանակ մարդ հարկադրուեց խոստովանել, որ գտ չի կարող պատահել երկրի մէջ թաղուած մի որ և է մեծ մագնիսից. այլ ընդհակառակը մագնիսականութիւնը պէտք է երկրագնատի բոլոր մարմինների մէկ լատկութիւնը պատկութիւնը լինի, ապա ուրեմն այս լատկութիւնը պատկանում է և՝ ամբողջ երկրին:

Միւս կողմից ուշադրութեան արժանի է և այն հանգամանքն, որ մագնիսացած ասեղները կամ կողմնացոյցի սլաքներն երկրի վրայ ամեն տեղում միւնոյն դիրքով չեն կանգնում: Այս բանը լաւ հասկանալու համար մի փորձ էլ անենք: Վեր առնենք մեր մագնիսացած մեծ ասեղը, զնենք սեղանի վրայ:

Պուրս են բղխում բայց—կարմիր հրեղին բացեր, սրանք գնալով աւելի ու աւելի մուլտ կարմիր գոյն են ստանում և ներգնեատէ կարչում են կապուատիկ երկնականարի անհուն տարածութեան մէջ: Հեռուց տեսնող անծանօթ մարզը կարող է հրդիկի աեղ ընդունել այդ տեսարանը:

Պէտք է ասել, որ մեզ երեացող հիմնախափայլ իսկական բնեռափայլի թոյլ պատկերն ու արտացօլումն է. մինչեւ հիմնախափայլին սառուցեալ ովկիանսում նետոյ մանափարճորդուղ գիտականներ պատմում են, որ բնեռին աւելի մօտիկ տեղերում շատ զեղեցիկ տեսարան է ներկայացնում հիմնախափայլը: Կամարաձև լոյսից գուրս ցայտող բացերը լինում են հետեւալ գոյներով, ներբեսում զեղին, մէջ տեղում կանաչ, իսկ վերևում կարմիր ու մանիշակագոյն: այս գրաիշ տեսարանը այնքան լուսաւոր է լինում, որ բաւականին հետուն կարելի է պարզ կերպով տեսնել:

Հիմնախափայլն ու հարաւափայլը բնեռներից հետու գտնուող տեղերում մօս երկու կամ երեք բառէ տեսում, իսկ նրանց մօսիկ երկիրներում համեմատարար աւելի երկար:

նրա բեեռներն արդէն մեզ յալտնի են. սրա վրայ՝  
ուղիղ մէջտեղում թելով քաշ տանք մագնիսացած  
ասեղը. թէ ինչ դիրք է բռնելու, այդ էլ զիտենք.  
միայն հետաքրքիրն այն է, որ այս դէպքում փոք-  
րիկ ասեղը կշեռքի լծակի նման հաւասար ու հո-  
րիզոնական դիրք է ստանում. այժմ սկսենք կամաց  
կամաց փոքրիկ ասեղը տանել դէպի մեծ մագնիսի  
հիւսիսին բեեռը. ի՞նչ է պատահում. կը տեսնենք,  
որ դէպի մեծ մագնիսի հիւսիսին բեեռը նայող  
փոքրիկ ասեղի ծալը հետզետէ ցածանում է և  
վերջապէս երբ հիւսիսին բեեռին հասնինք, իս-  
կոյն մեր փոքրիկ մագնիսը համարեա բոլորովին ու-  
ղիղ կամ ուղղահայեաց կանգնում, մնում է: Հիմա  
էլ շարունակենք յետ գնալ: Մեր փոքրիկ ասեղի  
կախ ընկած ծալը կամաց կամաց բարձրանում և  
ուղիղ մէջ տեղում դարձեալ իր առաջուայ հորի-  
զոնական դիրքն է ստանում. եթէ շարունակենք ա-  
ռաջ տանել դէպի մեծ մագնիսի հարաւային բեե-  
ռը, կը նկատենք, որ այս դէպքում էլ մեր ասեղի  
միւս ծալըն է կամաց կամաց ցածանում և վերջապէս  
ուղղահայեաց կանգնում է Տէ՞ պ. III: Աէնց միւնոյն  
բանն է պատահում երկրագնտի վրայ գտնուած բոլոր  
մագնիսների և առհասարակ կողմնացոյցերի սլաք-  
ների հետ. շատ պարզ է, որ մեծ մագնիսի դերը  
կատարում է ինքն երկիրը: Սրա հիւսիսային բեե-  
ռին մօտիկ եղած բոլոր մագնիսների ու կողմնա-


ցոլցերի հիւսիս նայող ծալըն են քիչ թէ շատ  
քաշ ընկած կամ ցածացած, իսկ հարաւալին բեե-  
ռին մօտիկ գտնուողների՝ հարաւ նայող ծալընը.  
մինչ գեռ երկրագնտի ուղիղ մէջ տեղում կամ հա-  
սարակացում մագնիսական սլաքները կանգնած են  
լինում հորիզոնական դիրքով, իսկ ճիշտ բեեռների  
վրայ ուղղահայեաց:

Երկրի մագնիսականութեան մի ուրիշ երեսը թն-  
էլ այն է, որ զանազան ժամանակներում և զանա-  
զան տեղերում նրա ոյժը փոփոխում է. բայց թէ  
ինչո՞ւ, դեռ ևս յալտնի չէ:

Միայն այսքանը հաստատ է, ինչպէս արդէն  
գիտենք տաքութիւնը կատարելապէս թուլացնում  
է մագնիսական ոյժը: Աէնց գրա համար Հումբոլտ  
գիտնականը շատ հաւանական է համարում, թէ  
արեգակի տաքութիւնը նոյնպէս ազդում է երկրա-  
գնտի մագնիսական ոյժին և նոյն իսկ սրանից պէտք  
է առաջանան շատ փոփոխութիւններ, քանի որ  
երկրի մակերեսով թը միշտ և ամեն տեղ միակերպ  
ու հաւասար չէ տաքանում: Մի կողմ թողնելով  
այս մանրամասնութիւնները, մենք տեսնում ենք,  
թէ ասեղների հետ կատարած հասարակ ու խաղա-  
լիք թուացող փորձերն ուր են առաջնորդում մեզ.  
Նրանք ցոլց են տալիս, որ մագնիսական ոյժը յտ-  
տուկ է բոլոր մարմիններին, երկրագնտին և ամ-  
բողջ տիեզերքին:

Մագնիսական ոլժի հետ սերտ ու մօտիկ կապուած է էլէքտրականութիւնը. այժմ անցնենք, թէ ինչ է էլէքտրականութիւնը, ինչ ծառայութիւն է արել և անում է մեր յառաջադիմութեան ու քաղաքակրթութեան համար:


պատկեր I



պատկեր II



պատկեր III



11

11

11

11

11

11 11 11

Բնագիտական ժողովրդական գրադարանից լրյու  
են տեսնել.

1) Կենդանիների բնագգն ու հասկացողութիւնը (սպառուած)	.	.	.	.	.	8 կ.
2) Ընտանի կենդանիներ (սպառուած).						5 կ.
3) Մեղուներ	.	.	.	.		10 կ.
4) Ոլժեր	.	.	.	.		10 կ.
5) Մագնիսականութիւն	,		.	.		10 կ.

Մամուլի տակ է եւ շոտով լրյու կը տեսնի  
կ լ ի ֆ Տ Բ Ա Կ Ե Ն Ո Ւ Թ Ի Ի Ն.

Տպագրութեան համար ըոլորտվին պատրաստ են  
Քիմիա, Ամնդասութիւն, Կերակրի շրջանառութիւն  
և այլն և այլն

## ԳԻՆՆԵ 10 ԿՈՊԵԿ

Մահասեւ-Յակոբեանցի տպարանում լնդունվուս  
են ամեն տեսակ պատրաստքներ հայերէն, սուսէրէն  
և թուրքերէն լեզուներով, որոնք կատարւում են  
ձեռնառ գներով և լաւ կերպով:

Հայոց. Г. Ռուսա Տոպոգրաֆիա Մահմետ-Ակոնօս.

2013

ՀՀ Ազգային գրա



NL00682

